

ԼՈՒՐԵՐ

ՊՈՒ Կ. Պօլսի վերջին խռովութիւններն անդրադարձան գաւառները և ինչպէս քանիցս գուշակել էինք մենք, անդրանիկ զոհը դարձեալ անպաշտպան հայերն եղան: Վերջին հեռագիրները գուժում են, որ Ադանայում, Մարաշում և շրջակայքում մոլեռանդ ամբոխն սկսել է հայերին ջարդել: Որոնցից առ այժմ յայտնի է, սպանուած են 400 հոգի, թէպէտ մի այլ հեռագիր այդ թիւն հասցնում է 5000 հոգու: Հայկական ջարդ է եղել նաև Բաղէշի Պանկաճոտ գիւղում, ուր սպանուած են 14 հոգի: Տաճկաստանի գաւառան անկիւններից անհանգստացնող լուրեր են տեղում լրագիրներին նաև Բաբերդի, Մշի և միւս տեղերի հայերի դրութեան վերաբերմամբ, երկիւղ են կրում նորանոր ջարդերի: Իսկ Կ. Պօլսի ճրճոտն սահմանադրութեան երջանիկ անդամները հրճուած են իրանց գործունէութեամբ: Իսկ Կ. Պօլսի հայ լրագիրները քիչ է մնում միմեանց դատարան քարշ տան:

ՊՈՒ Ե. Տաճկաստանի վերջին խռովութիւնների պատճառով, ինչպէս հեռագիրները հաղորդում են, սուլթանը մտադիր է հրաժարուել իւր գահից:

ՊՈՒ Զ. Ղուկասեան մրցանակաբաշխութիւնը յետաձգուած է 2 ամսով, ներկայացուած աշխատութեանց քննադատութիւնների ուշանալու պատճառով:

ՊՈՒ Է. Русское знамя լրագիրը յայտարարելով, որ հայերն ուզում են անջատուել Ռուսիայից և ի դէմս Կորիւն վարդապետի վերագրելով այն հայ վարդապետներին, առաջարկում է՝ հայ մութ ոյժի դէմ քնել մի ուրիշ մութ ոյժ—թուրքերին: Հետաքրքրական է՝ մտածում են արդեօք հայերը պատասխանել այդ միջնադարեան լրագրին թէ ոչ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍ ԽԱՆՆԵՐ

Երևան. Մ. Ենգ.—Ձեր նամակը ուշ ստացանք. կտպուի հետեւեալ համարում:

Սմրդանդ. Mars-ին.—Ձեր նամակին կպատասխանենք:

Կ. Պօլս. Մ. Ա. Օ.—Խնդրում ենք ուղարկել շարունակութիւնը:

Վենետիկ. «Բազմալէպի» խմբ.— Ստացանք «Մուրացանի» յօդուածը: Ձեզ առանձին նամակ գրեցինք: